

Երկրորդ հաղորդում

Աննայի սպասավորությունը

Գրվածքների ընթերցում. Ա Թգ 1:1–2:11, 18-21, 26

I. Մենք պետք է գիտակցենք, թե ինչ է Տիրոջ վերականգնումը. Տիրոջ վերականգնումը Սիոն կառուցելն է, որը հաղթողների՝ որպես Քրիստոսի Մարմնի իրականության նախատիպն է, որն ավարտունացնում է սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը.

Ա. Սիոնը Դավիթ թագավորի քաղաքն էր (Բ Թգ 5:7)՝ Երուսաղեմ քաղաքի կենտրոնը, որտեղ կառուցվեց տաճարը՝ որպես Աստծու բնակատեղը երկրի վրա (Սղմ 48:2, 9:11, 74:2, 76:2բ, 135:21, Եսյ 8:18):

Բ. Հին Կտակարանում կար Երուսաղեմ քաղաքը՝ Սիոնով՝ որպես կենտրոնով հանդերձ. ըստ նախատիպերի՝ եկեղեցական կյանքն այսօրվա Երուսաղեմն է. եկեղեցական կյանքում պետք է հաղթողների՝ կատարելագործված և հասունացած Աստվածամարդկանց մի խումբ լինի, և այդ հաղթողներն այսօրվա Սիոնն են՝ հմնտ Հյտ 14:1-5:

Գ. Որպես սուրբ Երուսաղեմ քաղաքի ականավոր գիծն ու գեղեցկությունը (Սղմ 48:2, 50:2)՝ Սիոնը հաղթողների՝ որպես եկեղեցու բարձրակետի, կենտրոնի, բարձրացման, ամրապնդման, հարստացման, գեղեցկության և իրականության նախատիպն է (48:2, 11-12, 20:2, 53:6ա, 87:2):

Դ. Երուսաղեմի առանձնահատկությունները, կյանքը, օրհնությունն ու հաստատումը բխում են Սիոնից՝ Գ Թգ 8:1, Սղմ 51:18, 102:21, 128:5, 135:21, Եսյ 41:27, Հվլ 3:17:

Ե. Հաղթողները՝ որպես Սիոնը, Քրիստոսի Մարմնի իրականությունն են և ավարտունացնում են Մարմնի կառուցումը տեղական եկեղեցիներում, որպեսզի բերեն ավարտունացած սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը, վերջնական Սրբությունների Սրբությունը՝ որպես Աստծու բնակատեղը հավիտենությունում (Հյտ 21:16, հմնտ Ելց 26:2-8, Գ Թգ 6:20). նոր երկնքում և նոր երկրում ամբողջ Նոր Երուսաղեմը կդառնա Սիոն՝ բոլոր հավատացյալներով՝ որպես հաղթողներով հանդերձ (Հյտ 21:1-3, 7, 16, 22):

Զ. Հայտնության գրքում այն, ինչ Տերն ուզում է ձեռք բերել, և այն, ինչ Տերը կառուցելու է, Սիոնն է՝ հաղթողները. սա Աստծու սուրբ Խոսքում հոգևոր հայտնության խորքային իրականությունն է. մենք, անշուշտ, պետք է հուսակտուր կերպով աղոթենք ցանկացած գնով և որոշակի գին վճարենք ճիշտ այնպես, ինչպես Պողոս առաքյալն էր դա անում՝ Եփս 6:17-18, Կղս 4:2, Փլպ 3:8-14:

Է. Այս դարաշրջանում հաղթողներին ուղղված Տիրոջ կանչին մեր արձագանքը մեր կենսական դառնալն է. կենսական լինել նշանակում է կենդանի և գործուն լինել մեր կենդանի և գործուն Աստծու հետ միաս-

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

նության մեջ. երկրի վրա Աստծու շարժումն Աստծու հավիտենական տնտեսության համար ի վերջո տեղի է ունենում հաղթողների միջոցով:

- Ը. Այս բռնազավթված երկրի վրա կա Եհովայի լեռը՝ Սիոն լեռը, որը լիովին բաց է Տիրոջ համար և որին Նա լիովին տիրում է. հաղթողները, ում նախատիպը Սիոնն է, ռազմահեռնադաշտ են, որի շնորհիվ Տերը՝ որպես փառքի Թագավոր, վերադառնալու և տիրելու է ողջ երկրին՝ որպես Իր թագավորության՝ Սղմ 24:1-3, 7-10, Դնլ 2:34-35, 7:13-14, Հվլ 3:11, Հյս 11:15, 19:13-14:
- Թ. Աստծու հավիտենական տնտեսության գագաթնակետին՝ Քրիստոսի Մարմնի իրականությանը հասնելու այլ ճանապարհ չկա՝ բացի աղոթելուց. Քրիստոսի հարսը լինելու նպատակով մեր՝ հաղթողները դառնալը՝ որպես Քրիստոսի Մարմնի իրականությունը, կավարտի այս դարաշրջանը՝ եկեղեցու դարաշրջանը, և կվերադարձնի Քրիստոսին՝ որպես փառքի Թագավորի, ով Իր հաղթողների հետ թագավորության դարաշրջանում կնվաճի այս երկիրը, կտիրի և կիշխի այս երկրին՝ խխ. 7-9, 20:4-6, Սղմ 24:7-10:

II. Թագավորաց առաջին գիրքը նախատիպերով ցույց է տալիս Իր թագավորությանը հանդերձ Քրիստոսին՝ որպես Թագավորի (ում նախատիպը Դավիթն է), բերելը.

Ա. Հեղիի օրոք հին ահարոնյան քահանայությունը կարծրացել ու թուլացել էր (2:12-29), և Աստված ցանկանում էր նոր սկիզբ ունենալ Իր հավիտենական տնտեսությունն իրագործելու համար.

1. Դատավորաց գրքի բովանդակությունն այսպիսին է. Իսրայելի զավակներն ապավինում են Աստծուն, թողնում են Աստծուն, պարտություն են կրում իրենց թշնամիներից և իրենց թշվառության մեջ ապաշխարում են առ Աստված. երբ նրանք դիմում էին Տիրոջը, Նա բարձրացնում էր մի դատավորի, ով նրանց ազատում էր կեղեքողների ձեռքից, բայց երբ այդ դատավորը մեռնում էր, նրանք վերադառնում էին իրենց չար ճանապարհներին և դարձյալ ապականված դառնում (1:1-2, 2:11-3:11). սա Դատավորաց գրքում յոթ անգամ կրկնվող շրջափուլ դարձավ:
2. Բազում տարիներ եկեղեցին պարզապես կրկնել է Իսրայելի պատմությունը դատավորների օրոք, բայց այսօր Աստված «սամուելների»՝ հաղթող ուխտավորների է ուզում ձեռք բերել (Թվց 6:1-9 և ծթգ), որոնք կբերեն Քրիստոսին՝ իրական Դավթին, որպես իշխող Թագավորի՝ Իր թագավորությանը հանդերձ, որը հազար տարի կտևի և որում հաղթողները «արևի պես շողալու են իրենց Հոր թագավորության մեջ» (Մտթ 13:43):
3. Այսօր մենք պետք է հայենք Տիրոջը նոր բան՝ նոր արթնություն, ստանալու հույսով, որը այս դարաշրջանը՝ սատանայական քառսի մեջտեղում եղող եկեղեցու դարաշրջանը, կփոխի Իր թագավորությանը հանդերձ Թագավորի դարաշրջանի, որը հազար տարի կտևի:

- Բ. Որպեսզի ծնվեր Սամուելը, Աստված տեսարանի հետևում տարբեր քայլեր էր ձեռնարկել. մի կողմից՝ Նա փակել էր Աննայի արգանդը, մյուս կողմից՝ պատրաստել Փենանային, ով սաստիկ վրդովեցնում էր Աննային և «վշտացնում այն բանի համար, որ Եհովան փակել էր նրա արգանդը» (Ա Թգ 1:5-6). ամեն տարի, երբ Աննան գնում էր Եհովայի տուն, Փենանան վշտացնում էր Աննային այն աստիճան, որ նա լաց էր լինում և ոչինչ չէր ուտում (խ. 7):
- Գ. Դա Աննային ստիպեց աղոթել, որ Տերն իրեն արու գավակ տա. Աննայի աղոթքին, որում նա ուխտ կապեց Աստծու հետ, սկիզբ դրեց ոչ թե Աննան, այլ Աստված. Աստծուն հաճելի էին Աննայի աղոթքը և նրա խոստումը, և Նա բացեց նրա արգանդը (խխ. 10-11, 20). Աննան հղիացավ, գավակ ծնեց և նրա անունը դրեց Սամուել (ինչը նշանակում է «Աստծու լսած») կամ «Աստծուց խնդրած»):
- Դ. Աստված կարողացավ գործողության մղել Աննային՝ որպես մարդու, որ Իր հետ մեկ էր կյանքի գծի վրա. կյանքի գիծը այն գիծն է, որն առաջացնում է Քրիստոսին՝ Աստծու մարդկանց վայելքի համար, որպեսզի Աստված երկրի վրա Իր թագավորությունն ունենա՝ եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմինը (Մտք 16:18-19, Հոմ 14:17-18, Եփս 1:22-23), Եռամեկ Աստծու օրգանիզմը. եթե միայն Աստված կարողանում է այդպիսի մարդու ձեռք բերել, ով Իր հետ մեկ է կյանքի գծի վրա, Նա երկրի վրա շարժվելու հնարավորություն է ունենում (Ա Թգ 1:1-2:11, 18-21, 26):
- Ե. Իրականում Սամուելի սկզբնաղբյուրը մարդը չէր. իրական սկզբնաղբյուրն Աստված էր, ով գերիշխանորեն ու ծածուկ կերպով գործողության էր մղում Իր մարդկանց. Աննայի աղոթքն Աստծու սրտի ցանկության արձագանքն էր, դրա բարձրաձայնումը. դա մարդկային համագործակցությունն էր աստվածային շարժման հետ՝ Աստծու հավիտենական տնտեսությունն իրագործելու համար.
1. Աննայի աղոթքը ցույց է տալիս, որ Աստված շարժվում էր՝ պատասխանելով նրա աղոթքին՝ հանուն այն բանի, որ ուխտավոր՝ հաղթող, առաջացնի, ով բացարձակ էր Աստծու ցանկությունը կատարելու համար՝ 1:10-20:
 2. Ուխտավորը մեկն է, ով բացարձակորեն նվիրաբերված է Աստծուն, ով ընդունում է Աստծուն՝ որպես իր Թագավորի, Տիրոջ, Գլխի և Ամուսնու, և ում չի հետաքրքրում աշխարհային հաճույքների վայելքը. դեռ Սամուելի ծնվելուց առաջ նրա մայրը նվիրաբերեց նրան՝ այդպիսի մարդ լինելու:

III. Թագավորաց առաջին գիրքը նկարագրում է այն սպասավորությունը, որը բերում է Թագավորին՝ Իր թագավորությանը հանդերձ. մենք կարող ենք այդ սպասավորությունը կոչել «Աննայի սպասավորությունը».

- Ա. Փենանան և Աննան ներկայացնում են երկու արմատապես տարբեր սկզբունքներ և երկու լիովին տարբեր սպասավորություններ (1:2, 4, 7). Աննայի սպասավորությունը սոսկ Թագավորին բերելու համար էր, ոչ

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

թե բազում զավակներ ունենալու. Փենանայի սպասավորությունը բազում զավակներ բերելու համար էր, այսինքն՝ նշանակալի արդյունք ունեցող սպասավորություն. Փենանան և իր զավակները ներկայացնում են Աստծու մարդկանց մեծամասնությունը, բայց նրանցից ոչ ոք առնչություն չունի դարաշրջանը փոխելու հետ, որպեսզի վերադարձնի Քրիստոսին՝ որպես փառքի Թագավորի (Սղմ 24:1-3, 7-10):

Բ. Աննայի ճանապարհը հեշտ չէր, և այն նույնիսկ ավելի էր դժվարանում Փենանայի՝ նրան իր հետ համեմատելու և ծաղրելու պատճառով. նրանք, ովքեր ուզում են «աննաներ» լինել, պետք է պատրաստ լինեն հալածանքի, քամահրանքի, լացի և ծոմապահության:

Գ. Հարցը սուկ այն չէ, թե մենք քանիսին կարող ենք փրկել, այլ այն, որ Աստված ձեռք բերի հաղթողների Իր ընկերությունը. Աստված ուզում է ձեռք բերել մի ժողովրդի, որն ընդունակ է աղոթելու և բերելու թագավորությունը Քրիստոսով՝ որպես Թագավորով և Նրա հաղթողներով՝ որպես համաթագավորներով հանդերձ:

Դ. Աննայի աղոթքը Մամուելի ծնվելու միջոց էր. մեր աղոթքների արդյունքը պետք է լինի հաղթողներ առաջացնելը. մենք պետք է աղոթենք՝ լինելով միասնության մեջ համբարձված Քրիստոսի հետ Նրա երկնային սպասավորության մեջ ուժեղացման փուլում հաղթողներ առաջացնելու համար՝ Հյտ 1:4, 3:1, 4:5, 5:6, 2:7, 11, 17, 26-29, 3:5-6, 12-13, 21-22:

Ե. Աննան հասավ այն սահմանին, որտեղ չէր կարող առաջ գնալ՝ առանց որդու. նա հասավ մի սահմանի, որտեղ պետք է որդի ունենար. Թագավորաց առաջին գրքի 1-ին գլխի այս որդին Հյտ 12-րդ գլխի հաղթող ընդհանրական արու զավակի նախատիպն է, նրա, ով փոխում է դարաշրջանը՝ բերելով Թագավորին Իր թագավորությամբ հանդերձ.

1. Աստծու ամենակարևոր տնօրինական շարժումը տեսնում ենք Հյտ 12-րդ գլխի արու զավակով, ով կազմված է Քրիստոսից՝ որպես առջևից գնացող Հաղթողից, և մեզնից՝ որպես Նրան հետևող հաղթողներից. քանի որ Աստված ուզում է ավարտել այս դարաշրջանն ու բերել Իր թագավորությամբ հանդերձ Թագավորի դարաշրջանը, Նրան անհրաժեշտ է հաղթող ընդհանրական արու զավակը՝ որպես Իր տնօրինական գործիքը:

2. Արու զավակի հափշտակությունը վերջ է դնում եկեղեցու դարաշրջանին ու բերում է թագավորության դարաշրջանը. այս հափշտակությունից հետո հնչում է «մի բարձր ձայն... երկնքում, որն ասում էր. Այժմ եկավ մեր Աստծու փրկությունը, գորությունն ու թագավորությունը և Նրա Քրիստոսի իշխանությունը»՝ Խ. 10:

IV. Աննայի փորձառությունը ցույց է տալիս, որ մեր դառնության մեջտեղում պետք է մեր շունչը հեղենք Տիրոջ առջև (Ա Թգ 1:6, 10, 15-16). Ելք 15-րդ գլխում Իսրայելի զավակները եկան Մեռայի ջրերի մոտ. երբ ժողովուրդը սկսեց տրտնջալ Մովսեսի դեմ, նա «Եհովային աղաղակեց, ու Եհովան նրան մի ծառ ցույց տվեց, նա էլ այն զգեց ջրերի մեջ, ու ջրերը քաղցրացան» (Խխ. 22-25).

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԻՐ

- Ա. Այն ծառը, որ Տերը ցույց տվեց Մովսեսին, խորհրդապատկերում է կյանքի ծառը. Հյտ 2:7-ը խոսում է «կյանքի ծառի» մասին. հունարենում այստեղ օգտագործված «ծառ» բառը նույնն է, ինչ «ծառ»-ը Ա Պտ 2:24-ում.
1. Հյտ 2:7-ի կյանքի ծառը խորհրդապատկերում է խաչված (ինչը ենթադրվում է ծառով՝ որպես փայտով՝ Ա Պտ 2:24) և հարուցանված (ինչը ենթադրվում է Աստծու կյանքով՝ Հվի 11:25) Քրիստոսին. ուստի կարելի է ասել, որ այն ծառը, որ Մովսեսը դառը ջրերի մեջ գցեց, խաչված և հարուցանված Քրիստոսն էր՝ որպես կյանքի ծառը:
 2. Երբ աղոթքով աղադակում ենք Տիրոջը, Նա մեզ ցույց է տալիս խաչված և հարուցանված Քրիստոսի՝ որպես կյանքի ծառի տեսությունը. մեր աղոթքի միջոցով, երբ Տիրոջ առջև հեղում ենք մեր շունչը, մենք այս ծառը գցում ենք մեր էության դառը ջրերի մեջ. այդժամ այդ դառը ջրերը փոխվում են Նրա ներկայության քաղցր ջրերի:
- Բ. Աննայի աղոթքը բխեց նրա դառը հանգամանքներից և նրա դառնացած էությունից (Ա Թգ 1:6, 10). նա Հեղին ասաց. «Ես հոգում ճնշված կիմ եմ.... Իմ շունչն եմ հեղում Եհովայի առջև.... Իմ անհանգստության ու սրտնեղության շատությունից էի մինչ հիմա խոսում» (Խխ. 15-16). Մղմ 62:8-ում ասվում է. «Ամեն ժամանակ Նրան հուսացեք, ո՛վ ժողովուրդ: Նրա առջև հեղեք ձեր սիրտը, Աստված ապաստան է մեզ: Մեյլա». Աստծուն հպվելու համար նման աղոթքը կազմված է սրտից անկեղծորեն ասված բառերից:
- Գ. Ամեն անգամ, երբ մենք դառը հանգամանքներում ենք լինում և մեր էության մեջ՝ դառնացած, պետք է Տիրոջ առջև հեղենք մեր շունչը մեր սրտի հետ միասին՝ Նրա հետ իրական ու ազնիվ լինելով. այսպիսի աղոթքն առաջացնում է հաղթողների, որոնք բերելու են Թագավորին՝ թագավորությանը հանդերձ:
- Դ. Երբ գալիս ենք «դառը ջրերի մոտ», պետք է գիտակցենք, որ Աստված գերիշխան ու ծածուկ կերպով մեզ մղում է հուսակտուր կերպով աղոթելու ոչ միայն մեր ներքին բուժման համար (Ելց 15:26), այլև ավելի շատ՝ հաղթող ուխտավորներ առաջացնելու, որոնք կհամագործակցեն Նրա հետ այն բանում, որ բերեն Թագավորին՝ Իր թագավորությանը հանդերձ, երբ Աստծու անունը գերազանց լինի ամբողջ երկրի վրա (Մղմ 8:1), և աշխարհի թագավորությունը դառնա «մեր Տիրոջ և Նրա Քրիստոսի թագավորությունը.... ու Նա թագավորելու է հավիտյանս հավիտենից» (Հյտ 11:15):